

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Արցախի պետական համալսարանի խորհրդի 2020թ. փետրվարի 20-ի N 5 նիստի

Նիստին ներկա էին խորհրդի 28 անդամներից 23-ը:
Հրավիրված էին խորհրդի անդամ չհանդիսացող ԱրՊՀ պրոռեկտորները, դեկանները, բաժնի վարիչները:

Նախագահությամբ՝ Գրիգորի Իգորի Մարտիրոսյանի
Քարտուղարությամբ՝ Լուսինե Գեորգիի Մարգարյանի

ՕՐԱԿԱՐԳ

1.Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքների հաշվետվության մասին

/Զեկուցող՝ ռեկտոր Ա. Յու. Մարգարյան/

2.Արցախի պետական համալսարանի 2019 ֆինանսական տարվա արդյունքների մասին

/Զեկուցող՝ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյան /

3. Այլ հարցեր

1.Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, որը ներկայացրեց ԱրՊՀ ռեկտոր Ա. Յու. Մարգարյանը:

Ըստ համալսարանի գործունեության կազմակերպման բաղադրիչների՝ ԱրՊՀ ռեկտոր Ա. Յու. Մարգարյանը մանրամասն ներկայացրեց 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքը:*/Հաշվետվությունը կցվում է. առդիր 9 էջ/:*

Հաշվետվությունն ամփոփվեց համալսարանի մեկամյա գործունեությունը ներկայացնող սահիկով:

Ռեկտորի տեղեկատվությունից հետո խորհրդի նախագահը հայտարարեց հարցերի և էլույթների հերթագրում:

Հարցի համար հերթագրվեցին՝

1. Լևոն Ավետիսի Գրիգորյանը/2հարց/

2. Նարինե Էդուարդի Աղաբալյանը/2հարց/

Ելույթի համար հերթագրվեցին՝

1. Շահեն Վարդանի Այդինյանը

2. Ռուզաննա Յակովի Մանգասարյանը

3. Լուսինե Գաչալի Ղարախանյանը

4. ԱրՊՀ ՈւՆ նախագահ Լիլիթ Սուրենի Մարգարյանը

Ըստ հերթագրման՝ ռեկտորին հարց տալու հնարավորություն տրվեց:

Հարց 1-ին. – Ինչո՞վ է պայմանավորված, որ դեռևս անբավարար է ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում, առավել ևս երբ Ղարաբաղ Տելեկոմը պատրաստակամ է և իր կողմից իրականացվող ծրագրերում ուսումնականը կարևորվում է:

Պատասխան 1-ին. – Այո՛, Ղարաբաղ Տելեկոմի կողմից մեզ տրված է անվճար կապ, բայց շենքային պայմանները, լսարանների կահավորվածությունը դեռևս բավարար գնահատել չի կարելի: Կապի միջոցները դեռևս լիարժեք հասանելի չեն, որ արդյունավետորեն կիրառվեն դասագործընթացում: Դա պայմանավորված է ֆինանսական հնարավորություններով, և, կարծում ենք, հիմնական մասնաշենքի հիմնանորոգումից հետո մենք կունենանք առավել մեծ հնարավորություններ և բարելավում այդ տեսանկյունից:

Հարց 2-րդ. – Կադրային քաղաքականության Ձեր տեսլականը կապվում է վարչական աշխատուժի կրճատման հետ, իսկ գո՞ւցե ավելի նպատակահարմար է աշխատուժի բոլոր հնարավորությունների օգտագործման կիրառումը, պարտականությունների առավել ծանրաբեռ աշխատակարգ պահանջելը:

Պատասխան 2-րդ. – ԱրՊՀ կարգավիճակը և այսօրվա հնարավորությունները գնահատելով՝ չափազանց ուռճացված է վարչական աշխատուժը: Իհարկե, աստիճանաբար պետք է օպտիմալացման գործընթացն իրականացվի, որովհետև ինդրի սոցիալական կողմը նույնպես պետք է հաշվառենք, բայց որ այդ գործընթացը կնպաստի բուհի զարգացմանը, դրանում համոզված ենք՝ ճանաչելով բուհի աշխատակազմի հնարավորություններն ու ներուժը:

Հարց 3-րդ. – Նշելով, որ թույլ է կրթության և տնտեսության միջև կապը, և բավարար չեն սոցիալական գործընկերության մեխանիզմները, ի՞նչ եք նախատեսում կատարել այդ ուղղությամբ:

Պատասխան 3-րդ. – Առաջին ձեռնարկված քայլերից է այն, որ կառավարման բոլոր մարմիններում՝ բուհի ֆակուլտետների, գիտական խորհուրդներում, ընդգրկվել են գործատուներ, կրթական ծրագրերը մշակվել են՝ հաշվի առնելով նաև գործատուների կարծիքները, առաջարկները: Այս ամենը դեռևս խորհրդատվական մակարդակում է, դա էլ կարևոր է, և հնարավորությունների ընդլայնում նախատեսում ենք գործընկերային հարաբերությունները այդ մակարդակից կիրառական տարածք տեղափոխելու ճանապարհով՝ գործատուի մասնակցությունը գործընկերային պատասխանատվության վերածելու:

Հարց 4-րդ.-ԱՀ տարածքում տասնյակ դպրոցներ հիմնական առարկաների գծով մանկավարժների կարիք ունեն: Հնարավո՞ր չէ մանկավարժական փորձուսուցման կազմակերպմամբ, բուհի այդ ներուժի օգտագործմամբ այդ խնդիրը լուծել:

Պատասխան 4-րդ.-Օրենսդրական տեսանկյունից դա հնարավոր չէ. փորձուսուցում իրականացվում է այն հաստատություններում, որտեղ կան տվյալ մասնագիտությամբ արհեստավարժ մասնագետներ, որոնց փորձը պիտի ուսանելի լինի տվյալ դեպքում, և դա տրամաբանական է, մյուս կողմից, ըստ մեր գործող կարգի, փորձուսուցվող խմբին կցվում են մեթոդիստ-դեկավար, մանկավարժ և հոգեբան, ու գնահատումն իրականացվում է համալիր խորհրդակցությամբ:

Ըստ հերթագրման՝ էլույթի հնարավորություն տրվեց:

Ելույթ 1-ին. _Շ. Այդինյանը արդյունավետ գնահատեց կատարված աշխատանքը՝ կարևորելով բուհում ներդրված հաշվետվողական համակարգի առկայությունը, ինչն ապահովում է բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքի իրական գնահատումը: Նա նշեց նաև, որ բուհ-հասարակություն-տնտեսություն համագործակցության գործող շրջանակներն ընդլայնելն օրախնդիր է, և առկա մակարդակը բավարար չէ մատուցվող կրթական ծառայությունները երկրի կարիքներին համապատասխանեցնելու պահանջն իրագործելու համար: Անհրաժեշտություն է նաև նյութատեխնիկական բազայի վերազինումը:

Շ. Այդինյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 2-րդ. _Ռ. Մանգասարյանը ողջունեց ու գնահատեց կատարված աշխատանքը, կարևորեց հատկապես ուսումնական գործընթացում իրականացված աշխատանքները, կատարված համալիր ինքնավերլուծությունը և մշակված կրթական ծրագրերը: Հատկանշեց, որ բարելավվել են փորձուսուցման իրականացման աշխատանքները, գործատու-բուհ համագործակցության առումով որոշակի քայլեր են ձեռնարկվել, և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին հետամուտ են:

Իբրև նկատառումներ՝ նշեց ա/ դասախոսական կազմի՝ արտերկրում վերապատրաստման խնդիրը, բ/ գիտահետազոտությամբ զբաղվելու խնդիրը՝ խրախուսման համակարգի ներդրմամբ, գ/ ԱՀ տարածքում գործող բուհերի նկատմամբ պետական ֆինանսավորման ոչ հավասար պայմանների առկայությունը:

Ռ. Մանգասարյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ելույթ 3-րդ. - Լ. Ղարախանյանը բարձր գնահատեց կատարած աշխատանքը, հատկանշեց տարվա ձեռքբերումը՝ բուհի ինքնավերլուծությունը, որը հնարավորություն է տվել իրատեսորեն գնահատելու առկա ներուժը և հնարավորությունները: Նա հաստատեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են բուհի հաշվետվողականության ու ըստ էության աշխատանքները կազմակերպելու մակարդակի բարձրացմանը:

Լ. Ղարախանյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:
Ելույթ 4-րդ.-ԱրՊՀ ուսխորհրդի նախագահ, խորհրդի անդամ Լիլիթ Մարգարյանը նույնպես բարձր գնահատեց 2018-2019 ուս. տարում կատարած աշխատանքը: Առանձնապես կարևորեց ղեկավարության կողմից ստեղծված համագործակցային բաց ու թափանցիկ պայմանները, որոնք նպաստեցին ուսանող-ղեկավարություն առողջ հարաբերությունների ձևավորմանը: Հատկանշվեց իրականացվող ուսանողամետ ու ուսանողակենտրոն քաղաքականությունը, արժևորվեց իրականացված կրթադաստիարակաչական միջոցառումները, որոնք ուղղված էին թե՛ ուսանողի մասնագիտական ներուժի բացահայտմանը, թե՛ անձնային որակների զարգացմանը:

Լիլիթ Մարգարյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ամփոփելով և հիմք ընդունելով ելույթ ունեցողների գնահատականները՝ խորհրդի նախագահն առաջարկեց Արցախի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

1.Որոշեցին՝

Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2018-2019 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

2.Լսեցին՝

Արցախի պետական համալսարանի 2019 ֆինանսական տարվա արդյունքների մասին:

ԱրՊՀ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյանն ամփոփ ներկայացրեց 2019թ. նախահաշվի կատարողականը: /*Համապատասխան փաստաթուղթը կցվում է առդիր 1 էջ:*

Զեկուցումից հետո խորհրդի նախագահը հայտարարեց հարցերի հերթագրում:

Հարցեր չգրանցվեցին :

Խորհրդի նախագահն առաջարկեց քվեարկել: Բաց քվեարկությամբ միաձայն *բավարար* գնահատվեց կատարված աշխատանքը:

2.Որոշեցին՝

ԱրՊՀ 2019թ. ֆինանսական տարվա արդյունքները գնահատել *բավարար*:

Նիստի նախագահ՝
Քարտուղար՝

Գ. Ի. Մարտիրոսյան
Լ. Գ. Մարգարյան

Առդիր 10 էջ

ք. Ստեփանակերտ
20.02.2020

